


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ЛОРИ МАРЗ г. ВАНАДЗОР  
ООО «ЭКОПРОЕКТ»  
ул. Агаяна 94 / 31

«LORI MARZ, VANADZOR»  
» ЕКОПРОЕКТ« Ltd  
Agayan str. 94 /31



ԼՈՌԻ ՄԱՐԶ  
ք. ՎԱՆԱԶՈՐ

«ԷԿՈՊՐՈԵԿՏ» ՍՊԸ  
Աղայան 94 / 31



ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ



☎ 094 66 00 25

ֆաքս՝ 0 322 4 36 90

[ekoproekttd@mail.ru](mailto:ekoproekttd@mail.ru)

Պետ. լիցենզիա - 15168

Ներդիր - 01, 02, 03, 04

No 09-17

07 օգոստոսի 2017թ.

Պատվիրատու՝ ՀՀ կառավարության ատենախոս  
Քաղաքաշինության պետական կոմիտե  
Նախագծող՝ «ՔՎԷ նախագիծ» ՍՊԸ  
Տնօրեն պարոն Է. Քոչարյանին  
ՆԳՆ պարոն Ա. Մակունցին

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ «ՎԱՆԱԶՈՐԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ»  
ՊՈԱԿ - Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ


«ԷԿՈՊՐՈԵԿՏ» ՍՊԸ -ն ուսումնասիրելով ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի բոնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ - ի հիմնանորոգման նախագիծը՝ երաշխավորում է նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկա-կան փաստաթղթերի պարտադիր պահանջներին :

Օբյեկտի նախահաշվային արժեքը կազմում է 27454.24 հազար դրամ , ներառյալ ԱԱՀ :

Առդիր՝ եզրակացություն 5 էջից :

«ԷԿՈՊՐՈԵԿՏ» ՍՊԸ տնօրեն՝

Ա. Եգանյան



Հաստատում եմ՝

<< 07 >> օգոստոսի 2017թ.

Տնօրեն՝

Ա.Եգանյան

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ << Լոռու մարզի << Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց >> ՊՈԱԿ - ի հիմնանորոգման աշխատանքային նախագծի փաստաթղթերի

Պատվիրատու՝ << կառավարության առընթեր Նախագծող՝ << ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ >> ՍՊԸ  
Քաղաքաշինության պետական կոմիտե

### Նախագծման հիմք են ծառայում՝

1. ՀՀՔՊԿ - ՊԸԱՀԶԲ - 17/14 պայմանագիրը
2. Ճարտարապետահատակագծային առաջադրանքը
3. Տեխնիկական բնութագիրը

### Ներկայացված է նախագիծ կազմված 3 գրքից

- Գիրք 1 – Ճարտարապետաշինարարական մաս  
Գիրք 2 – Ինժեներական մաս  
Գիրք 3 – Նախահաշիվ

### Ճարտարապետաշինարարական մաս

Մարզադպրոցի կցակառույցն իրենից ներկայացնում է (12.4 x 6.6) մ արտաքին չափերով, 3.08 մ հարկի բարձրությամբ մեկհարկանի շինություն քարե պատերով։ Կցակառույցը հատակագծում հիմնականում ունի ուղղանկյունաձև տեսք։ Շինության մեջ ներառված են միջանցք, հանդերձարաններ, սանհանգույց, շոգեբաղնիք, ցնցուղարան և մարզասրահ։ Շինության կոնստրուկտիվ սխեման լուծված է կոմպլեքս արտաքին կրող և ինքնակրող պատերով, շրջանակներով՝ 40 x 40 սյունակալներով։ Շինության հիմքերը՝ պատերի տակ հոծ ժապավենային են՝ իրականացված խամքարաբետոնից՝ 60 սմ լայնությամբ։ Պատերն ունեն 40 սմ հաստություն և իրականացված են տուֆ քարերից։ Միաձույլ երկաթբետոնե շրջանակներն իրականացված են (40 x 40) սմ, հիմնային հեծանները՝ (50 x 60) սմ չափերով։ Բացվածքների բարավորներն իրականացված են միաձույլ երկաթբետոնից։

Ծածկերն իրականացված են ծածկի անցքավոր սալերից, մասամբ միաձույլ տեղամասից։

Հատակներն իրականացված են պրեսգրանիտե, կերամիկական և սպորտային վինիլե հատակներից։ Արտաքին դռները՝ ալյումինե, ներքին դռները՝ մետաղապլաստե, պատուհանները՝ մետաղապլաստե։

Տանիքը ծրարածն է՝ իրականացված փայտե էլեմենտներից և ծածկված պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով՝ ազատ ջրահեռացմամբ :  
Միջնորմները իրականացված են խարամաբետոնե բլոկներից ու սալիկներից :  
Նախագծով նախատեսված է / ելնելով նախագծային առաջադրանքից / հետևյալ շինարարական աշխատանքները.

1. Հիմքերի կառուցում
2. Ե/բետոնե շրջանակների կառուցում
3. Պատերի և ե / բետոնե գոտիների կառուցում
4. Ծածկի կառուցում անցքավոր ե/բ սալերից և միաձույլ սալերից
5. Տանիքի փայտե կոնստրուկցիաների կառուցում
6. Տանիքածածկի կառուցում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից
7. Միջնորմների կառուցում
8. Պատերի և առաստաղների սվաղում ց / ավազային և գաջի շաղախով
9. Սանհանգույցների պատերի երեսապատում հախճաասալերով
10. Պատերի ներկում
11. Մետաղապլաստե սպիտակ 4 խցիկանի պատուհանների տեղադրում
12. Արտաքին պլուսմինե և ներքին մետաղապլաստե դռների տեղադրում
13. Ե / բետոնե բարավորների կառուցում
14. Հատակների կառուցում
15. Տեխնիկական սենյակի կառուցում
16. Ինժեներական կոմունիկացիաների կառուցում

## Ինժեներական մաս

### Ջուր և կոյուղի

ՀՀ Լոռու մարզ, Վանաձոր քաղաքի Երևանյան և Խնձորուտի փողոցների անկյունում գոյություն ունեցող մարզադահլիճի կցակառույցի ջրամատակարարման և կոյուղու նախագիծն իրակա - նացված է համաձայն պատվիրատուի պատվերին և գործող շինարարական նորմերին ու կանոն - ներին համապատասխան:

Վանաձոր քաղաքի ջրամատակարարման ենթակառուցվածքներ ծրագրով թիվ 12 ճնշումային գոտում 2008-2012 թ իրականացվել է ջրամատակարարման համակարգի վերականգնում, որտեղ փոխարինվել են բոլոր խողովակները PE խողովակներով և տեղադրվել են ստորգետնյա հակա - հրդեհային հիդրանտներ, համապատասխան գործող նորմաներին: Սպորտդահլիճի ջրամատակարարումն իրականացվել է Փ40 խողովակով, որի միացման կետից Փ32 տրամագծի պոլիպրոպիլենային խողովակով սնուցվում է նաև գործող կաթսայատունը: Այդ ջրագծից նախատեսված է նաև կցակառույցի ջրամատակարարումը:

Նախագծում նախատեսված է ներքին ջրամատակարարումն իրականացնելու համար նախագծել ջրագիծ Փ20 տրամագծով պոլիպրոպիլենային խողովակներով:

Ջրագծի ելակետային աղբյուր է հանդիսանում ջրի գոյություն խողովակը: Նախագծվող լոգարանի և շոգեբաղնիքի կոյուղագծի խողովակները նախատեսված է միացնել գործող կոյուղու դիտահորին:

Արտաքին ջրագծը նախատեսված է իրականացնել 1.2մ խորությամբ, պոլիպրոպիլենային խողովակներով: Տաք ջրամատակարարումն իրականացվում է տեղադրվող էլեկտրական ջրատաքացուցիչի միջոցով:

Կոյուղագծի ներքին տեղամասի խողովակները մոնտաժվում են վերգետնյա եղանակով պոլիվի - միլբորիդե Փ50 խողովակներով, իսկ արտաքին կոյուղագծերը մոնտաժվում են ստորգետնյա եղանակով պոլիվիմիլբորիդե PVC Փ160 խողովակներով:

Կոյուղու խողովակների կցվող միացություններում հարկավոր է օգտագործել ռետինե սեղմող օղակներ, իսկ հիմքերում արված անցքերում, որոնցով անցնում են խողովակները տեղադրել պող - պատե պաշտպանիչ պատյաններ և լցնել չարկող էլաստիկ նյութով:





Ջրագծի և կոյուղու համակարգերի մոնտաժումն ու փորձարկումը կատարվում է համապատաս - խան աշխատանքի արտադրության գործող նորմերի ու կանոնների ՇՆուԿ 3.05.01-85:

Հողային բոլոր աշխատանքներն իրականացնել այն բոլոր կազմակերպությունների ներկայացու - ցիչների ներկայությամբ, որոնց իրավասության տակ են գտնվում ստորգետնյա կոմունիկացիա - ները:

### **Ջեռուցում և Օդափոխություն**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց ՊՈԱԿ - ի ջեռուցման աշխատանքային նախագիծը կատարված է ճարտարապետա - շինարարական գծագրերի, գործող ՇՆուԿ 2.04.05-86; 3.05.01-85 հիման վրա Ջեռուցման նախագիծը կատարված է արտաքին - 16 C հաշվարկային ջերմաս - տիժանի համար:

Նախագծով նախատեսված է տեղադրել փակ այրման խցով կաթսա 24 կվտ հզորությամբ - 1 հատ (նախատեսված սենյակում):

Ջերմակրողը՝ ջուրը կաթսաից մատակարարվում է ջեռուցման համակարգ D=20--25 մմ պոլիպրոպիլենային խողովակներով: Ջեռուցման համար նախա - գրծված ջեռուցման համակարգերի սնող և հետադարձ մայրուղիները անցնում են հատակների վրայով (մասամբ անցուղիներով, որտեղ խողովակները ջերմա - մեկուսացվում են): Կաթսի մոտ տեղադրվում են գտիչներ D = 25 մմ:

Որպես տաքացվող մարտկոց ընտրված ալյումինե մարտկոցները 147 կկալ/ժ ջերմատվությամբ, որոնց ջերմատվությունը կարգավորվում է կարգաբերման փականների միջոցով, որոնք տեղադրվում են մարտկոցները մատակարարող և հետադարձ գերմագծերի վրա: Օդը ջեռուցման համակարգից հեռացվում է Մաևակու արտաթորող ծորակների միջոցով, որոնք տեղադրվում են մարտկոց - ների վերևի խցանների վրա: Ջեռուցման համակարգի գծերի մոնտաժը կատարվում է պոլիպրոպիլենային խողովակներից, որոնք ամրացվում են ամրակների միջոցով՝ քայլը ելնելով խողովակի տրամագծից համապատասխան նորմատիվների: Ջերմամատակարարման և հետադարձ խողովակներին տալ թեքություն համապատասխան գործող նորմատիվների դեպի ջեռուցման աղբյուր:

Ջեռուցման համակարգից ջրի հեռացումը նախատեսված է կաթսաի մոտ դատարկման ծորակների միջոցով:

Ալյումինե մարտկոցները ամրանում են պատերին կախիչների միջոցով՝ յուրաքանչյուր մարտկոցների համար 3 - ից 4 հատ կախված մարտկոցների սեկցիաների քանակից:

Օդափոխությունը իրականացվում է բնական եղանակով՝ նախատեսվող օդափոխության համակարգի միջոցով: Հանդերձարաններում, սանհանգույցում և ցնցողարանում նախատեսվել է նաև օդափոխության համակարգ ստիպողական եղանակով:

### **Ներքին էլեկտրամատակարարում**

Լոռու մարզի «Վանաձորի բնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ - ի հիմնանորոգման էլեկտրամատակարարման սույն աշխատանքային նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել հետևյալ ելակետային փաստաթղթերը.

1. Հարկի հատակագծերը

2. Տեղազննման արդյունքները

Էլեկտրասնուցումը իրականացվում է ներքին բախշիչ վահանից 0.22 կՎ լարման ВВГНГ 3 x 6 մմ<sup>2</sup> տիպի պղնձե ջիղերով մալուխով, որի երրորդ ջիղը հանդիսանում է հողանցման ջիղ և միանում է մի ծայրում բախշիչ վահանի հողանցման հպակին իսկ երկրորդ ծայրը լուսավորության խմբային վահանի հողանցման դետալին: Մալուխը գոյություն ունեցող վահանից դեպի նախագծվող վահան անցնում է պատով դեպի

տանիք, տանիքով մինչև նախագծվող կցակառույց և իջնում դեպի վահան, պաշտպանված Փ 16 մմ ճկախողովակով :

Լուսավորության հաշվարկները կատարված են ելնելով սենյակի նշանակությունից), նրանց չափերից և լուսավորվածությունից, ըստ СНиП II-4-79 «Բնական և էլեկտրական լուսավորություն» նախագծային նորմերի, ՀՀ էլեկտրահաղորդաբախշման տեխնիկական կանոնակարգի և ՀՀ տարածքում գործող այլ նորմերի և կանոնների :

Ընդունված են՝ մարզադահլիճում 37 Վտ հզորությամբ լուսադիոդային, միջանցքում և հանդերձարաններում կախովի արաստաղային, էկոնոմ լամպով լուսատուներով, սանհանգույցում և լոգարանում խոնավապաշտպան ներկառուցվող առաստաղային լուսատուներ էկոնոմ լամպերը կարելի է փոխարինել համարժեք շիկացման լամպով ըստ պատվիրատուի պահանջի : Սանհանգույցի, լոգարանի և շոգեբաղնիքի լուսավորության հաղորդալարերը կախովի առաստաղի վրա անցնում են ճկախողովակով :


Լուսավորության ցանցերը նախատեսված է անցկացնել ՈՈՅ 2 x 2.5 մմ<sup>2</sup> և ՈՈՅ 3 x 2.5 մմ<sup>2</sup> մակնիշի և կտրվածքի պղնձե ջիղերով և ՊՎՔ մեկուսացումով հաղորդալարով՝ փակ սվաղի տակ :

Էլեկտրասպառիչների և էլեկտրասարքավորումների մետաղական իրանները որոնք չեն գտնվում լարման տակ ենթակա են հողանցման կամ գրոյակցման: Հողանցման կոնտուրի դիմադրությունը չոր եղանակին չպետք է գերազանցի 4 Օհմ (R ≤ 4Օ) :

### Գազամատակարարում

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոցի գազաֆիկացման աշխատանքային նախագիծը մշակված է ճարտարապետա-շինարարական գծագրերի, ՀՀՇՆ IV - 12.03.01 - 04 - ի և ԳԳՄ - ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանի հիման վրա:
2. Գազաֆիկացման ելակետային աղբյուր է հանդիսանում կաթսայատան գոյություն ունեցող գազատարը:
3. Մատակարարվում է չոր բնական գազ 8050 կկալ /մմ<sup>3</sup> ջերմարար ունակությամբ,  $\delta = 0.73 \text{ կգ} / \text{մմ}^3$  խտությամբ:
4. Գազատարից օգտվող սարքավորումների քանակը - 1 հատ, տաք ջրի և ջեռուցման համար 2.0 մմ<sup>3</sup> / ժամ ծախսով:
5. Ցածր ճնշման գազատարը D = 15 մմ մոնտաժվում է վերգետնյա պողպատե ուղղակար եռակցված խողովակներից ԳՈՍՏ 10704-91: Խողովակների կարը չի ենել հենասյուների, ստեղծել զննման հնարավորություն : Ջողակարերը պետք է հենասյան ծայրերից հեռու լինեն ոչ պակաս 0.3 մ - ից : Գազատարը մոնտաժվում վերգետնյա:
6. Նոր մոնտաժվող գազատարը մոնտաժվում է գոյություն ունեցող խարիսխների վրայով:
7. Գազատար խողովակի մեկուսացումը մետաղական կոնստրուկցիաներից (խարիսխներից) կատարել պոլիէթիլենից ԳՈՍՏ 16338-85E:
8. Կցաշրթերը պետք է համապատասխանեն ԳՈՍՏ 12820-80: Միացումների համար անհրաժեշտ են տակդիրներ, յուղադիմացկուն ռետինե (4 - 5 մմ) հաստությամբ ԳՈՍՏ-7338-77:
9. Փորձարկումը կատարել յուղաներկումից առաջ:
10. Մոնտաժումը, փորձարկումը և աշխատանքների ընդունումը կատարվում է պահպանելով ՀՀՇՆ IV-12.03.01-04-ի պահանջները:

Ներկայացված է նախահաշիվ 27454.24 հազար դրամ :



ՀՀ Լոռու մարզի << Վանաձորի բնօրգամարտի մանկապատանեկան մարզադպրոց >> ՊՈԱԿ – ի հիմնանորոգման նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա , որը հաստատված է թիվ 68, 69 առ 21.08.2001թ. և թ. 879-Ն առ 23.06.2011թ. ՀՀ Քաղաքաշինության Նախարարության հրամանների : Միջին աշխատավարձի չափ – 204173.0 դրամ : Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնվում հետևյալ գործակիցները .

1. Շինարարական նյութերի արժեքին տրված է՝
  - ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնվող գործակից - 1,0893
  - բ - Այլ նյութերի չափը հաշվի առնվող գործակից - 1.05
  - գ - Պահեստային , փաթեթավորման ծախսերը հաշվի առնվող գործակից - 1.02
2. Աշխատավարձի գործակից - 1886.12
3. Մեքենա – մեխանիզմների շահագործման գործակից - 2647.76
4. Վերադիր ծախսեր - 13.3 %
5. Շահույթ - 11 %
6. Ժամանակավոր կառույցների և շենքերի կառուցման արժեքը - 0.5 % համաձայն

ՀՀ Քաղաքաշինության Նախարարության 21.09.2001թ. թիվ 69 հրամանի  
 7. Ձմեռային պայմաններում կատարվող լրացուցիչ ծախսերը - 0.45 % համաձայն  
 ՀՀ Քաղաքաշինության Նախարարության 21.08.2001թ. թիվ 68 հրամանի Նյութերի և սարքավորումների արժեքները վերցված են թիվ 6 ինֆորմացիոն տեղեկագրից հրապարակված 2016թ. ՀՀ << Ֆինանսների Նախարարության Գնագոյացման հաշվարկային ինֆորմացիոն կենտրոն >> կողմից:

Նյութերի ծախսերը որոշված են ըստ ՇՆ և Կ –ին համապատասխան :

Ավելացված արժեքի հարկը հաշվի է առնված 20%

Շինարարության ընդհանուր արժեքը կազմում է - 27454.24 հազ. դրամ :

Նախագծում և նախահաշվում նկատված թերությունները վերացվել են համատեղ քննարկման ժամանակ :

### Եզրակացություն:

<< ԷԿՈՊՐՈԵԿՏ >> ՍՊԸ –ն ուսումնասիրելով ՀՀ Լոռու մարզի << Վանաձորի բնօրգամարտի մանկապատանեկան մարզադպրոց >> ՊՈԱԿ – ի հիմնանորոգման նախագիծը՝ երաշխավորում է նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին :

Օբյեկտի նախահաշվային արժեքը կազմում է 27454.24 հազար դրամ , ներառյալ ԱԱՀ :

Փորձագետ՝

Փորձագետ՝



Կ. Անտոնյան

Դ. Դավթյան